

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՅՐԵՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՕՐՈՐ - ՀԱՅՐԵՆ

Կենցաղային ծիսական քնարերգության մեջ առանձնանում են օրորոցային երգերը, որոնք սկսել են հորինվել այն ժամանակներում, երբ ձևավորվել է ընտանիքը: Այլ կերպ ասած՝ դեռևս վաղնջական ժամանակներից մեզանում ստեղծվել են օրորոցային երգեր, որոնք երգվել են դարեր շարունակ, որոնցով դաստիարակվել են իրար հաջորդող սերունդները: Անգամ նոր ժամանակներում հորինվել են նոր օրորոցային երգեր, որոնք իրենց մեջ ամփոփում են նոր ժամանակների ոգին: Հայ օրորոցային երգը, պայմանավորված հայոց պատմական ճակատագրով, ձեռք է բերել նաև ռազմի երգին բնորոշ հատկանիշներ /Արի իմ սոխակ.../, սակայն միջնադարյան օրոր-հայրենները շարունակել են ծառայել իրենց նպատակին, այն է՝ գեղեցիկ երգով քնեցնել մանկանը: Ինչպես նկատված է, «Օրորոցի երգերի հիմնական առարկան երեխան է: Միրագորով մայրը բազմաթիվ պատկերավոր համեմատություններով ու համադրություններով գովում է իր տղայի կամ աղջկա գեղեցկությունը, նրանով լցված տեսնում բնությունն ու աշխարհը» (Գր. Գրիգորյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Ե., 1980, էջ 353): Ժողովրդական երգերի մեջ իր յուրահատուկ տեղն ունի օրորոցային երգը, որը գոյության հավերժատույտի անբաժանելի մասն է կազմում: Կյանքի շարունակելիության ու սերնդի պահպանության գաղափարը մարդու գոյության գերխնդիրն է, և այդ առումով օրորոցային երգերը չափազանց կարևորվել են հայ և ոչ միայն հայ իրականության մեջ: Միջնադարյան օրոր-հայրենները ևս հաստատում են ասվածը: Թեև օրոր-հայրենները հիմնականում տեղ են գտել Ասատուր Մնացականյանի կազմած «Հայրեններ» ժողովածուի Դ գրքում¹, սակայն օրոր-հայրենի նմուշ է նաև Ա գրքի հետևյալ հայրենը.

*Ի՞նչ մայր է զքեզ բերեր,
Ի՞նչ դայեկ՝ զքեզ սնուցեր.
Զքեզ եղն ի սարին բերեր,
Ու շահին բազան սնուցեր.
Լուսինն քեզ ծիծ տվեր,
Արեգակն է դադրեցուցեր.
Քամին՝ տարուբեր արեր,
Սուրբ կուսանքն՝ օրոր ասացեր. Ա/ԿԸ, 217-224:*

Փոքրիկ այս ստեղծագործությունը բնության և մանկան ներդաշնության մի օրոր

¹ Տե՛ս Ա. Մնացականյան, Հայրեններ, Երևան, 1993, 1036 էջ (Այս գրքից կատարված մեջբերումների էջերն այսուհետև կբերենք մեջբերման վերջում, նշելով շարքի և էջի համարը):

Է՝ հյուսված գեղարվեստական բարձր ճաշակով ու յուրահատուկ մտածողությամբ: Եթե այս հայրենը իր բովանդակությամբ շարքի մեջ եզակի է, ապա Դ գրքի մի քանի շարքեր ամբողջությամբ օրորոցային երգեր են, ինչպես Դ/Ա շարքը:

Աղուոր ես, չունիս խալատ,

Երթամ ո՞վ բերիմ պէխալատ.

Երթամ լուսնկան բերիմ,

Լուսուն աստղերը պէխալատ. Դ/Ա, 1-4:

Մոր համար իր որդին անմահ է, չունի ոչ մի թերություն. ժողովրդական խոսքն ասում է. «Ագռավի ձագն իր համար գեղեցիկ է»: Մայրական այդ զգացողությունը տեղ է գտել հայրենների երգաշխարհում՝ օրորոցի երգերում:

Աղուոր ես, չունիս խալատ.

Քու ամեն տեղդ է պէխալատ.

Դուն ալ խալատ բան մ'ունիս,

Քուն չունիս, արթուն կու կենաս. Դ/Ա, 5-8:

Մայրական աչքերով կատարյալ երեխան ունի միայն մի թերություն՝ քուն չունի, մնում է արթուն, որի պատճառով էլ իր օրորոցային երգը բավականին երկար երգվում է, և այն ընդհատվում է երեխայի քնելուն պես: Իսկ մինչ այդ օրորոցային երգը վերածվում է նորածնին ուղղված մաղթանքի.

Դուն ապրիս հօրով մօրով,

Հաց նստիս ջուխտակ աղբարով. Դ/Ա, 24-25:

Մաղթանքը ոչ միայն ասվում է նորածնի հարազատների ապահովության համար, այլև հենց նորածնին երկարակեցություն է բարեմաղթվում.

Դուն ապրիս հազար տարի,

Հազար ալ ապրիս նը պիտի,

Ետի դին մեռնիլ չի պիտի. Դ/Ա, 21-23:

Մաղթանքը չի սահմանափակվում միայն երկարակեցության ցանկությամբ, այլև բարեմաղթվում է կյանքում հեռու մնալ չարից և ապրել անփորձանք.

Մեծնաս դու հազար տարի,

Ու չի գաս աւուր մի չարի.

Աւուր մ'ուր չարի տի գաս,

Քու չարերը դառնայ բարի. Դ/Ա, 50-54:

Օրորոցային երգի մեջ մայրը չի մոռանում նաև երեխայի ապրուստի ապահովման մասին ևս, որը ծնողին հատուկ մտահոգություն է, ավելին՝ ծնողական պարտականություն:

Է անիմ, օրօր անիմ,

Եզները քու բերի փայ անիմ.

Էմմենուն քչիկ-քչիկ,

Քու փայիկդ եւել տի անիմ. Դ/Ա, 32-35:

Մանկանը միայնակ չթողնելու, խաղընկեր բերելու ցանկությունը ևս տեղ է գտել օրոր-հայրեններում:

Աղուոր ես ծոցուդ ի վեր,

Երթամ ո՞վ բերիմ խաղընկեր.

Երթամ լուսնկան բերեմ,

Լուսուն աստղը՝ խաղընկեր. Դ/Ա, 74-77:

Ծնողի համար բախտավորություն է նաև իր երեխայի ապագան ապահովված տեսնելը, որի մղումով էլ մայրը օրոր երգելիս ցանկություն է հայտնում, որ իր որդին մեծանա և դառնա «գեղին մեծը»:

Օրօր կանչիմ իմանաս,

Պառկիս 'լ անուշ քնանաս.

Քնանաս ու մեծանաս,

Մեծնաս ու մեծ մի լընիս,

Բոլորիս ու գեղ մի լընիս.

Ան գեղն, ուր մեծ չի կենայ,

Ան գեղին մեծը դուն լընիս. Դ/Ա, 78-84:

Իր նորածին մանկանը պահպանելու համար մայրը դիմում է Մարիամ Աստվածածնի բարեխոսությանը և Սուրբ Խաչի զորակցությանը.

Մարիամ մարը մար կանինք,

Իր մէկիկ որդին եարտըմճի.

Երթամ եղկեցի մտնիմ,

Ուր բռնիմ սուրբը տուաճի.

Սուրբ խաչն ալ աղբար անիմ,

Թնը վրայնիս պահէ. Դ/Ա, 91-96:

Այս շարքն ամբողջությամբ օրորոցային երգերի շարան է: Սակայն Դ/Ա շարքը միակ օրորոցային շարքը չէ: Հայրենների երգաշխարհում օրոր-հայրենների ենք հանդիպում նաև Դ/Ժ, Դ/ԺԴ, Դ/ԺԹ, Դ/ԻԷ, Դ/Լ, Դ/ԼԲ, Դ/ԼԴ, Դ/ԿԵ շարքերում:

Այս շարքերում բերված օրորներում նկատելի է նաև ժողովրդական կենցաղի նկարագիրը, ինչպես ոսկե օրորոցը՝ արծաթե կամարով.

Օրօր, օրօր, օրանդ էր օսկի,

Օրանդ էր օսկի, կամարդ արծաթ.

Տար ու բեր, հովե՛կ, տար ու բեր...

Իմ եավրուիս քնակն առ ու բեր... Դ/ԻԷ, 1-4:

Ժողովրդական կենցաղի մասին գաղափար ենք կազմում նաև նորածնի անկողնի՝ «յօրդանի» ու «բարձի» միջոցով.

Օրօր, օրօր, քուն ունիս,

Մզրա լեռը տուն ունիս.

Է, է, է.

Մարգարտէն եօրդան ունիս,

Ջէւահիրէն բարձ ունիս.

Է, է, է:

Մի ուրիշ օրոր-հայրենի մեջ նույն պատկերը կրկնվում է.

Օրօր, օրօր, քուն ունիս,

Բէշիկտաշը տուն ունիս.

Մարգարտէ եօրդան ունիս,

Ջաւահիրէն բարձ ունիս.

Էկուր, քեզ բաղձան տանեմ,

Ծառէ ի ծառ կապեմ կախուրան. Դ/ԼԲ, 8-13:

Երգի նյութ է դարձել նաև մանկան հագուստը.

Պահեմ շարէ շար շապկով, լաթերով,

Մարգրտի, նռան հատերով. Դ/Ժ, 47-48:

Մանկանը կերակրելու խնդիրը ևս կարևորվել է օրորոցի երգերում.

Քաղցրը կաթնով տի կշտացնընեմ... Դ/Ժ, 97:

Օրորոցի տարուբերից հոգնած՝ մայրը օրորելու է կանչում սոխակին.

Թ՛գայ ի ձորէն պիւլպիւլ,

Քեզ ալե օր, օր թող կանչէ. Դ/Ժ, 71-72:

Կամ էլ լեռները պիտի գան օրոր ասեն, իսկ հարավային քամին պիտի օրորի.

Լեռներն օրօր ըսեր,

Հարաւու հովիկն ալ օրրեր. Դ/Լ, 9-10:

Հարաք քեամին քեյ տանի պիրի. Դ/ԿԵ, 5:

Մայրը մտորում է նաև չար աչքից հեռու պահել իր մանկանը.

Չարխափան չարերդ խափանէ,

Աստուածամար արևդ պահէ. Դ/Ժ, 88-89:

Հոգատարության ու խնամքի, սիրո ու գորովանքի, մանկան կյանքի ու ապագայի նկատմամբ հոգածության զգացումներով է իր օրորը երգել հայ կինը, որի համար նվիրական ձգտում է դարձել զավակին մեծացնելը.

Օրօր ըսիմ քնանաս,

Դուն պզտիկ ես, մեծանաս,

Մեծնաս ու մեծ մի լընիս,

Բռլըրիս ու գեղ մի լընիս. Դ/ԺԴ, 29-32:

Ոչ միայն նորածնին մեծ ու գեղեցիկ տեսնելու բարեմաղթությամբ է մայրը երգում իր մանկան օրորոցի մոտ, այլև ցանկանում է, որ իր որդին իշխան դառնա.

Դուն աս քաղքին վրայ

Խօսաց տեր ու իշխան ըլլիս. Դ/ԼԲ, 18-19:

Ի վերջո, օրոր-հայրենները կատարվել են մանկանը քնեցնելու նպատակով, ուրով և ավարտվում է Դ/Ժ շարքը.

Օրօր, օրօր, քըներ ես,

Ծածկեր եմ, քրտներ ես,

Է, է, է.

Երեսիդ շալը դէն տանիմ,

Վարդի նման բացուեր ես. Դ/Ժ, 107-111:

Օրոր-հայրենները, անշուշտ, հորինվել և երգվել են կանանց կողմից, դրանց հեղինակ-երգչուհիները իրենց երեխաներին անսահմանորեն սիրող մայրեր են, որոնք դարեր շարունակ օրոր են ասել բազմաթիվ սերունդների: Միամիտ է կարծել, թե Քուչակը կնստեր նորածնի կողքին ու օրոր-հայրեն կերգեր: Այնպես որ՝ հայրենների երգաշխարհում ժողովրդական մտածողության բազմաթիվ դրսևորումներից զատ մեկ անգամ ևս ի հայտ է գալիս մի յուրօրինակ գրական տեսակ՝ օրոր-հայրենը, որի հեղինակները անվերապահորեն մայր կանայք են, ովքեր և երգել են օրորո-

ցային այդ քնքույշ երգերը:

ԵՐԴՈՒՄԸ ՀԱՅՐԵՆՆԵՐՈՒՄ

Հայրենների մեջ սփռված է նաև ժողովրդական մտածողության հատուկ մեկ այլ գործածական ժանրային տիպ՝ երդումը, որն իմաստային կապվածություն ունի անեծքի հետ: Սարգիս Հարությունյանը այսպես է բնորոշում անեծքի և երդման ժանրային տարբերությունը՝ գրելով. «... եթե պայմանով անեծքներում և՛ պայմանը, և՛ անեծքը ուղղված է դիմացինին՝ անիծվողին, ապա երդման դեպքում և՛ պայմանի, և՛ անեծքի կրողը երգվողն ինքն է: Այստեղ արդեն ի հայտ է գալիս անեծքի և երդման ժանրային տարբերությունը: Երդման դեպքում անեծքի իրագործման հնարավորությունը սահմանափակվում է որոշակի իրադրության պայմանով, որի վերացման դեպքում միայն կարող է իրագործվել անեծքը» /Ս. Հարությունյան, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Ե., 1975, էջ 138/:

Ոչ միայն երդումն է մեջբերվում հայրենների մեջ, այլ երբեմն ուղղակի ասվում է, որ քնարական հերոսը երդում է տալիս այս կամ այն պայմանով.

Ջերդումն ի բերանն էառ. Ա/ՁԱ, 23:

Երդնու՛ի, երդում տայի,

Այն տէսթորից դուրս չգայի. Ա/ՁԲ, 1245-1246:

Այս դեպքերում ոչ թե կոնկրետ երդում է տրվում, այլ խոսքն այն մասին է, որ ուրիշ մեկը, այդ թվում՝ նաև հայրենի հեղինակը, երգվել է:

Սակայն հաճախ հանդիպում ենք նաև երդման խոսքերի, որոնք այսօր էլ հնչում են մարդկանց շուրթերին՝ ձեռք բերելով կիրառական լայն շրջանակ: Դրանցից հատկապես հաճախադեպ են երգվողի համար հոգեհարազատ որևէ մեկի (հոր, մոր, երեխաների, սեփական անձի) արևով երդումները, որոնք հայրեններում ևս, իբրև ժողովրդական մտածողության արտահայտություններ, հանդես են գալիս տարբեր շարքերում:

Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ,

Լսեցի՛ լեզուս կապեցաւ. Ա/Թ, 5-6:

Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ,

Նայ սիրուն՝ քար չի դիմանայ. Ա/ԺԱ, 29-30:

Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ,

Ես փայտեղ զամազ չեմ տեսեր. Ա/Դ, 7-8:

Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ,

Տերնին խիստ հայճ կու լինի. Ա/ԽԴ, 15-16:

Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ,

Լսեցի՛ լեզուս կապեցաւ. Ա/ԽԶ, 5-6:

Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ,

Լսեցի՛ լեզուս կապեցաւ. Ա/ՕԱ, 53-54, Ա/Կ, 113-

114,

Ա/ՁԱ, 431-432, Ա/ՁԳ, 682-

683:

Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ,
 Աս նետիկս ի յիս քար եղաւ. Ա/ՕԱ, 61-62:
 Ընկայ ի ծովուն միջին,
 Ղարդ եղայ ու կերթամ ի վար.
 - Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ,
 Յըցուցէք ինձ ելնելու ճար. Ա/ԿԱ, 88-89:
 Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ,
 Որ սիրուն՝ քարըն չըդիմնայ. Ա/ԿԳ, 5-6:
 Մանկո՛ւնք, ձեր արևնուդ ասեմ,
 Այս նետիկս, որ յիս գամուեցաւ. Ա/ՁԲ, 463-464,

Ա/ՁԳ,

706-707:

-Գիշերս ես ի քուն էի,
 Քունս ի ներս սրտիկս երեցաւ.
 Եկին ու բերին խապար՝
 «Քո սիրած եարն զքեզ մոռցաւ».
 Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ,
 Լսեցի՝ լեզուս կապեցաւ.
 Շուտով դեղ ու ճար արէք,
 Որ չասեն, թէ՝ «Անկի մեռաւ». Ա/ՁԳ, 678-685:

Քնի ու երազի մոտիվը մեկ անգամ չէ, որ զբաղեցնում է հայրենների հեղինակի ուշադրությունը, սակայն այստեղ մեզ հետաքրքրողն այն է, որ սրանք վկայակոչումով երդումներ են, որոնք երդման բանաձևերի մի ճյուղ են կազմում: «Կան երդումների երկու հիմնախումբ՝ երդում-անեծքով և երդում-վկայակոչումով, որոնք, անկախ իրենց բնույթի տարբերությունից, ունեն միևնույն կառուցվածքը» (նույն տեղում, էջ 137):

Վկայակոչումը կարող է լինել ինչպես կտրիճ-մանկան արևով, այնպես էլ սեփական անձի արևով երդում-վկայակոչում, ինչպես՝

- Այս ծով, անհիուն գիշերս
 Ես ի ձեր դռնակն եմ եկեր.
 Դռնակն այլ ի փակ տեսեր,
 Փռչիման ի յետ եմ դարձեր.
 - Երնեկ արևուս վրա,
 Դու ի մեր դռնակն չես եկեր... Ա/Դ, 11-16:

Երդման մեջ երբեմն վկայակոչվում են երկինքն ու երկիրը, ինչպես՝

Երկինք ու գետինք վկա՝
 Սիրեր եմ ու չեմ մոռանար. Ա/Ը, 31-32:
 Երկինք ու գետին վկայ՝
 Չեմ երեր, զքեզ չեմ մոռանայր. Ա/ԿԳ, 219-220:

Կամ էլ վկայակոչվում է սիրած յարի արևը, ինչպես՝

Ի՛մ եար, քու արևդ ասեմ,
 Քեազի սէր կայ ի մէջ սրտիս.

Ասե՛մ, չամաչեմ այլ ես.
 Կու սիրեմ, որ կելնէ հոգիս. Ա/ԻԷ, 13-16:
 Հիմա, քո արևտ ասեմ,
 Քանի դու մեզ ես պիտացել. Ա/ԽԴ, 197-198:
 - Իմ եար, քո արևտ ասեմ.
 Միս չունիմ, ոսկերքս է մաշել. Ա/ԽԴ, 203-204:
 Մի՛ ճոճար, կօզալ, արևուտ. Ա/ԽԶ, 122:
 Իմ եար, քո արևտ ասեմ,
 Քեզի սէր կայ իմ սրտիս. Ա/ԾԱ, 183-184:
 Ե՛կ, իմ խակ ու ժուռ ծծեր,
 Որ նագով մայրն սնուցեր.
 - Ջատ այլ ի ծոցս եմ պահեր,
 Քո արևն՝ այլ մարդ չէ տեսեր. Ա/ԿԵ, 5-8:
 Չարկամն, որ ի գալ տեսնում,
 Քո արևդ, որ լաւ ջանամ ես.
 Ջարիւնս ի վերայ թափեմ,
 Թուխ աչեր, դու կանգնէ ու տե՛ս. Ա/ԿԸ, 9-12:
 - Էրնէկն յարևուտ վերայ,
 Դուն ի մեր դուռն չե՛ս եկեր. Ա/ԿԳ, 163-164:
 Այդ քոյ ստեղծողիդ համար,
 Երբ քայլես՝ գունքըդ մի՛ շարժեր.
 Այդ քո աչերուտ խնճերն
 Շատ մարդու արիւն է խմեր.
 Խօշ եար, արևուտ համար,
 Որբուկ եմ, զիս մի՛ լացընէր.
 Տղայ եմ ու չեմ լոեր,
 Ջիս ի քո հուրն մի՛ ձգեր. Ա/Կ, 337-344, Ա/ԶԲ, 1221-

1224:

Երդման համար վկայակոչվում է նաև Աստված, նկատենք, որ այժմ էլ գործածվում է «Աստված վկա» երդումը.

Ջիմ Աստուածըն, հանց պաշտեմ,
 Որ ըղորթ սրտով կու սիրեմ. Ա/ԽԶ, 13-14:
 Երդնում զինչ երդում ունիս,
 Որ Աստուած ի վեր վկայ է.
 Սրտիկս ի քենէ ի գատ
 Չեմ մնար՝ թ՛ այլ մարդ կու սիրէ. Ա/Կ, 503-506:

Բանաստեղծական երևակայության արդյունք է լուսնի արևով երդումը.

- Լուսի ն, քո արևտ ասեմ,
 Պահ մի կաց՝ ինչօր լուսանայ. Ա/ԽԹ, 83-84:

Տարածված է նաև եղբոր արևով երդումը, որն ավելի շատ հատուկ է եղբորը սիրող քրոջ խոսքին, այլ կերպ ասած՝ հիշյալ երդումը պետք է ասված լինի կնոջ կողմից.

- Քա՛ղ, քո Աստուած սիրուն,
Քո մէկիկ աղբօրն արևուն. Ա/Հ, 43-44:
Քո մէկիկ աղբօրն արևուն. Ա/ՀԵ, 80:

Թէն հայրեններում հիմնականում հանդիպում ենք վկայակոչումով երդումների, սակայն երդման մյուս տիպը՝ անեծքով երդումը ևս չի շրջանցվել հայրենների հեղինակների կողմից:

Իմ եարն 'ւ ես մեկտեղ եկաք,
Բռնեցաք մեք զԱստուած վկայ.
Մեծ դաւ ու երդումն արաք՝
Գօթենայ՝ ով սէրն ուրանայ. Ա/ԽԲ, 19-22:

«Թէ՛ պայմանով անեծքների և թէ՛ անեծքով երդումների դեպքում պայմանի հետևությունը պարտադիր անեծք է. տարբերությունը միայն պայմանի և անեծքի բաղադրանքային բնույթի մեջ է», - նկատել է Սարգիս Հարությունյանը (նույն տեղում, էջ 138): Այսինքն՝ երդումն իր հիմքում պայմանական բնույթ է ստանում, երբ զուգորդվում է անեծքին: Ստացվում է այնպես, որ եթե պայմանը չկատարվի, ապա անեծքը պիտի գործի: Այս դեպքում՝ սիրող զույգերը Աստծո վկայությամբ երդվում են, որ չդրժեն իրենց սիրո ուխտը, ապա դրվում է երդման պայմանը, այն է՝ «Գօթենայ՝ ով սէրն ուրանայ»: Այս կապակցությամբ դիպուկ է նկատել Սարգիս Հարությունյանը. «Ինչպես պայմանով անեծք-օրհնանքների դեպքում, այնպես էլ երդումների հիշյալ հիմնախմբերում, երդման բանաձևերը կառուցված են պայմանի և հետևության գողվածքով...» (նույն տեղում, էջ 137): Անեծքով երդում է նաև հետևյալ հայրենը.

Մարդ չեղնամ, թէ էլ եար սիրեմ,
Կամ զքո սէրն մոռանամ.
Կամ զքո անուշիկ պագիկն
Ի սրտէս հանեմ, ուրանամ. Ա/ԺԶ, 9-12:

Այս դեպքում պայմանը սերը չմոռանալն է, որից բացի պայմանը երկրորդվում է՝ «անուշ պագիկ»-ը ևս մտապահելու պահանջով, հակառակ պարագայում՝ գործելու է անեծք-երդումը:

Նկատենք, որ հայրենների երգաշխարհը հարուստ է նաև երդումներով, որի երկու հիմնախմբերն էլ՝ երդում անեծքով և երդում վկայակոչումով, հանդես են եկել տարբեր հայրենային շարքերում: Ընդ որում՝ երդումների գործածված տիպերը այսօր էլ կենդանի են ժողովրդական մտածողության մեջ, որը գալիս է բազմիցս հաստատելու այն իրողությունը, որ հայրենները կրում են ժողովրդական մտածողության կնիքը: